ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «02» հուլիսի 2019թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲ բաժնի գլխավոր մասնագետ, Վ. Մելքոնյան.
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից 28.06.2019թ. ԳՀԱՊՁԲ-10/19-9 ծածկագրով գնման պայմանագիրը կնքելուց հրաժարվելու վերաբերյալ ներկայացված գրության քննարկման մասին.
2. Բանակցությունների անցկացման վերաբերյալ.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից 28.06.2019թ. ԳՀԱՊՁԲ-10/19-9 ծածկագրով գնման պայմանագիրը կնքելուց հրաժարվելու վերաբերյալ ներկայացված գրության քննարկման մասին

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Գրասենյակային գույքի և կենցաղային կահույքի» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էր ներկայացրել Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը և ընթացակարգի 1-ին, 4-րդ, 5-րդ, 17-րդ, 23-րդ, 35-րդ և 37-րդ չափաբաժինների մասով ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, այնուհետև հաղթող /ընտրված/ մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո 15.06.2019թ. մասնակցին պատշաճ ծանուցվել էր կնքվելիք պայմանագրի նախագիծը, միաժամանակ ծանուցմամբ տեղեկացվել էր, որ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովումը և ստորագրելու համար ներկայանալ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչություն՝ ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 010-66-24-94: Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մաղաքյան: Սակայն **28.06.2019թ.** Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից **a.maghaqyan@mil.am** էլեկտրոնային հասցեին ստացվեց գրություն այն մասին, որ առողջական խնդիրների վատթարացման պատճառով Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը հրաժարվում է ԳՀԱՊՁԲ-10/19-9 պայմանագիր կնքելուց: Միաժամանակ armeps համակարգում մերժելով պայմանագրի շնորհումը:

1.2 Քանի որ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը, որպես ընտրված մասնակից հրաժարվում է պայմանագրի կնքելուց, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 49-րդ կետը՝ որոշեց, ընթացակարգի 1-ին, 4-րդ, 5-րդ, 17-րդ, 23-րդ, 35-րդ և 37-րդ չափաբաժինների մասով բավարար գնահատված մասնակիցներին ճանաչվել հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները՝ ***Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի*** տվյալները ուղարկել լիազորված մարմին:

1.4 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելու արդյունքում ընթացակարգի ***1-ին և 37-րդ չափաբաժինների մասով*** հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ի, «Բեկյալ», «Ֆոտոն» «ԱՌԿՏՈՒՐ», «Վանդեկոր» ՍՊԸ-ների կողմից առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով **08.07.2019թ. ժամը 12:00-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի նիստ հրավիրել բանակցությունների անցկացման օրը ժամը 12^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Մուրադյան
Գնահատող		Ա. Պապյան
Գնահատող		Վ. Մելքոնյան
Հանձնաժողովի քարտուղար		Ա. Մաղաքյան